

ԴԱՐՁԵԱԼ Կ(Ը) ԵՂԱՆԱԿԻՉԻ ՄԱՍԻՆ

ԳԱՐԹՈՒՎ ՀԱՆԱՆԵԱՆ

tatev_hanyan@mail.ru

Կ(ը) եղանակիչ մասնիկի ծագումը հետաքրքրել է լեզուաբաններին ինչպես անցելով, այնպես էլ նոր ժամանակներում: Հարցին անդադարձել են հայերենի պատմության մը զբաղուող ե՛լ հայագի, ե՛լ այլագի հայագետներ: Այս ուղղության մը կատարում ռաումասիրության ներքին մեջ ուղղության առաջին արժանի են Արսէն Այտնեանի, Եղգէ Կարստի, Մանուկ Արեղեանի, Ալեքսանդր Մարգարեանի եւ Գէորգ Զահուկեանի արտայայտած կարծիքները:

Այտնեանն առաջինն էր, որ զբաղուել է «... արդի լեզուին գլխաւոր կերպարանաւոր ընդն եղած»¹ մասնակի առաջացման ժամանակի, նախահիմքերի ու նրա անհրաժեշտութեան խնդիրներով: Ըստ Այտնեանի, այս մասնիկը երեւան եկաւ այն պահին, երբ անհրաժեշտ էր տարբերակել ձեւով նոյնացած սահմանականի եւ ստորադասականի իմաստները: Առաջացել էր իմաստային անորոշութիւն ու շփոթ. «Այն անորոշութեան մեջ որոշիչ կ'ըլլար Կու մասնիկը, իբրեւ կնիք սահմանականի, եւ կը դուրսէր նոր ստորադասական ներկայիս եւ անկաւարին վրայ եւ իրարմէ կ'որոշուէին երկու եղանակները»²:

Հաւանական չհամարելով Կ(ը)ի օտար, կամ օտար ազդեցութեամբ առաջացած լինելու վարկածը, Այտնեանն անելի հաւանական է համարում այս մասնիկի իայեցի ծագումը. «... գուցէ ներելի ըլլայ հեռաւոր նմանութիւն մը փնտրել կայ ու բառերուն յօդաւորութեան մեջ, որով կու տեսնանէ մեկնուի կայ ու տեսանէ, կու մնայ՝ կայ ու մնայ, կու նայի՝ կայ ու նայի եւ այլն»³: Իբրեւ հիմնաւորում իր ենթադրութեան՝ «հին գրոց մեջէն» հին գրաբարին սոյն յատկութեանը բաականէն անելի իրական եւ բացայայտ օրինակներ է բերում. ինչպէս՝ «Նա կայր ցուցանէր, կալ ակն ունել, կայ մնայ, եւ այլն, - կամ այսպէս՝ լային եւ կային»⁴: Ըստ Այտնեանի, հենց կայ բառը կարող էր «էական եւ էապէս իրարմէ տարբեր» եղանակները տարբերակել, որովհետեւ այն միայն սահմանականի իմաստ էր արտայայտում եւ, դրուելով կից բայի վրայ, արդէն վերացնում էր եղանակային ու ժամանակային շփոթը:

Կարստը, անընդունելի համարելով կամ (ք) բառից կի առաջացման Հայերի Պետերմանի ստուգաբանութիւնը, իր կողմից հիմնաւորում որեւէ վարկած չի առաջադրում. նա կարծես հակումած է Այտնեանի բացատրութեանը: Ըստ Կարստի, Այտնեանի կարծիքը կարելի է վստահելի համարել եւ ընդունել. «... Եթէ յաջողութիւն ապացուցել հեղեմալը».

1) կայ ու որպէս կու մասնիկի նախածեւ, սահմանականի ֆունկցիայի մեջ մի ժամանակ հանդէս է եկել ընդհանուր եւ կանոնաւոր ձեւով կամ գոնէ

յաճախակի եւ ոչ հապուկներ, ինչպէս կարծես թէ հեքեում է վկայութիւնների սահմանափակ թուից.

2) հնչիւնական օրէնքների համաձայն կայու կապակցութիւնից կարող էր ծագել կու ձեւը»⁵:

Կարստի այս վերապահումների համար կարելի է անել հետեւեալ դիտողութիւնները.- նախ՝ **կայ ու** ձեւի հետ միաժամանակ վկայում է նաեւ **կայ** առանց շաղկապի ձեւը՝ իրրեւ սահմանականի իմաստն առաւել ընդգծող միջոց, որ արդէն իրրեւ սահմանականի եղանակիչ լայնօրէն գործառում է արեւմտեան մի շարք բարբառներում (Բէլլանի, Կեսարիայի, Բողազլեանի), իսկ այ>ա>օ հնչիւնափոխութեամբ՝ նաեւ Զէյթունի, Մարաշի, յաջորդական օ>ու անցումով՝ Սուեդիայի բարբառներում: Միջին հայերէնի ակունքներին անելի մերձաւոր բարբառներում օրինաչափ է ա>օ, որից էլ՝ օ>ու հնչիւնափոխութիւնը:

Աբեղեանը, յետեւելով հիմնականում Կարստի դիտողութիւնների վրայ, համոզիչ չի համարում Այտնեանի հիմնաւորումը եւ առաջարկում է **կ(ը)ի** ծագման այլ աղբիւր: Ըստ Աբեղեանի **կու** մասնիկի հին ձեւն է **կոյ** եւ իրրեւ հիմնաւորում իր ենթադրութեան, օրինակներ է բերում զանազան ձեռագրերից եւ Վարդան Այգեկցու առակներից, ուր իրրեւ սահմանականի եղանակիչ հանդէս է գալիս **կոյ** մասնիկը: Այգեկցու առակներից բերում թուր օրինակներում **կոյը** յարադրում է հին սահմանականի ձեւերին, ինչպէս՝ կոյ հանես, կոյ վերցնես, կոյ պահես, կոյ մտանես եւն.⁶: Այս **կոյ** մասնիկը նա դիտում է իրրեւ անկախ բառ եւ զուգահեռներ է անցկացնում դրա եւ արդի բարբառներում (յատկապէս արեւելեան) առկայ **կո/կյո, գօ/գյօ** վերաբերական իմաստով անկախ բառ մասնիկների միջեւ: Ապա ներկայացնում է օրինակներ. «Կյո տու ես ասելի», «Ես կո քնես եմ», «Գօ եօթն ջաղացի քար կաղայ, մէկ մարդ կուտայ, չի կշտանայ», «Կյո խարսնիս կանեն» եւն.: Այստեղ Աբեղեանն անտեսում է այն փաստը, որ **կո/կյո** մասնիկը հանդէս է գալիս ոչ միայն արդէն իրրեւ սահմանական ձեւաւորում ղերբայակազմ, այլ նաեւ **կ** մասնիկով ձեւերի հետ:

Աճառեանը եւս անդրադարձել է **կ(ը)** եղանակիչի ծագմանը: Նա անվերապահօրէն ընդունում է Այտնեանի կարծիքը եւ յաւելում՝ «... այժմ թուր յոջախոհ հայագէտների կողմից ընդունում է այն»⁷: Առաւել հաստատելու համար Այտնեանի կարծիքը՝ նոյն տեղում (էջ 397) Աճառեանը ներկայացնում է Կեսարիայի բարբառի սահմանական ներկայի ժխտական ձեւերը՝ չկամ կարդամ, չկար գրէի, չկաս գրէր:

Կ(ը) եղանակիչի մասին ուշադրութեան արժանի է Մարգարեանի «Կ» եղանակիչի Ծագման Մասին» (*Պատմաբանասիրական Հանդէս*, 1961, N 1, էջ 158-178) յօդուածը: Չընդունելով **կ(ը)ի** ծագման մասին մինչ այդ յայտնուած կարծիքները՝ Մարգարեանն առաջարկում է մի նոր վարկած, ըստ որի **կ/կու** եղանակիչն առաջացել է հին հայերէնի **կամիմ** բառից՝

անցնելով եղանակիչ մասնիկներին բնորոշ սղում-մաշումների ողջ ճանապարհը: Բաական լա հիմնատրելով **Կ(ը)**ի առաջանալու երկարատեւ ուղին, Մարգարեանը, սակայն, ուշադրութիւն չի դաչծնում այն հանգամանքին, որ **կամիմը** արտայայտում է միայն կատարելի գործողութիւնների կամայնութիւն, ցանկականութիւն, ինչպէս՝ **պիտի, պէտք էն՝** անհրաժեշտականութիւն, **կարող է, կարելի էն՝** կարելիականութիւն: Եղանակայնութիւն արտայայտող բոլոր եղանակիչ բառերը, **կամիմը** եւս գործառում է միայն անորոշի կամ էլ արդէն դիմատրուած անորոշի հետ, ինչպէս՝ ուզում եմ, կամենում եմ գնալ(մ), կարելի է, կարող է գնալ(մ), պէտք է գնալ(մ) եւն.: Սահմանականի ձեւերում գործառող **Կ(ը)**ն չէր կարող **կամիմից** առաջանալ, որովհետեւ այն առաւելապէս ընթացքի մէջ եղող, արդէն կատարուող գործողութիւնների իմաստն է որոշակիացնում:

Կ(ը) եղանակիչ մասնիկի ծագման մասին ամենավերջին ուսումնասիրութիւնը Զահուկեանի «Հայերէնի Բայական Կ(ը) Մասնիկի Մասին» յօդուածն է: Զահուկեանը, չընդունելով **Կ(ը)**ի ծագման մասին արտայայտուած նախորդ կարծիքները, աւելի հաւանական է համարում Աբեղեանի հիմնատրումը՝ գտնելով, որ «Կու-ն կոյ-ից բխեցնելու դէպքում լիովին բացատրելի են դառնում կի-ով ձեւերը»⁹: Զահուկեանը, սակայն, չի հիմնատրում, թէ ինչպէս է հնարատր **կոյից կի** անցումը:

Ատոխալի բարբառում, ուր եւս գործառում է **կին** իբրեւ սահմանականի եղանակիչ, ոյ>ո(օ)>ի անցում չկայ: Նոյնը եւ Դիադինի բարբառում: Հաստատապէս չպիտելով **կոյ>կի** անցման բաւարար հիմնատրուած լինելը՝ աւելացնում է. «... եթէ, իհարկէ, այստեղ չենթադրենք ու-ի անկում եւ ի նախդիրի յաւելում»⁹: Որ իրօք **կի**ով ձեւերի ին նախնական նախդիրի արտայայտութիւն է՝ հիմնատրում է Ատոխալի բարբառի ժխտական ձեւերի կազմութեամբ: Զիմ, չիս, չի, չինք ... եւն. ձեւերը (չիմ թողու, չիս թողու, չիմ անի, չիս անի, չին էրթա, չին իմանա, չին դիսնա եւն.)¹⁰: Այս չիւնը կարող էր առաջանալ ե՛ւ չենք>(չինք)ից ե>ի հնչիւնափոխութեամբ, որ օրինաչափ է Ատոխալի բարբառում, ե՛ւ ի նախդիրի եւ ոչ ժխտական մասնիկի չի միացմամբ. ոչ ի գիտել ենք>*չի գիտել ենք: Ժխտականի համաբանութեամբ էլ կարող էր ծայնատրուել հաստատականի **կի**ով ձեւը:

Որոշ բարբառներում էլ **կի**ով ձեւերը պարզապէս ներդաշնակեցման արտայայտութիւններ են (Մարաշ, Հաճըն, Բէլան):

Զահուկեանը նշում է նաեւ, որ «Վարդան Այգեկցու մօտ կոյ/կու/կ՝ մասնիկը գործածում է նաեւ ապառնու իմաստով, այսինքն՝ նրանով ներկայ թէ ապառնի ժամանակ արտայայտելը կախուած է գործածութիւնից՝ հասկանալի դարձնելով մասնիկի երկու տարբեր գործածութիւնները տարբեր տարածքներում»¹¹: Վարդանը, ինչպէս արդէն նշել ենք, կիլիկեան տարածքներից էր, Այգեկ գիւղից: Կոյի կիրառութիւններն իբրեւ սահմանական ներկայի ու անկատարի

եղանակիչ, առկայ են այդ տարածքների առաւել մերձաւոր ժառանգներից մէկի՝ Չէյթունի բարբառում: Այս տարածքներում **կոյը** կամ **կուն** կարող էին առաջանալ **կայ** ձեւից՝ Չէյթունի բարբառում այ>ա>օ, Սուեդիայում՝ այ>ա>օ>ու անցումով: Չէյթունի բարբառում սահմանական ներկան ու անկատարը կազմում են բացառապէս **գօ** մասնիկով (առանձին դէպքերում՝ ծայնաւորներից առաջ՝ նաեւ **գ՛**ով սղուած տարբերակով): Այս բարբառում սահմանական ապառնին, բացի պիտի>քի եղանակիչով բաղադրեալ ձեւից, կազմում է նաեւ **գու** մասնիկով: Այս **գուն**, ըստ բարբառի հնչիւնական օրէնքների, չէր կարող առաջանալ **կայից**, որովհետեւ բարբառը չունի ա>ու անցում: Այստեղ **կու>գօն** կարող էր ծագած լինել միայն մի այնպիսի ձեւից, որում լինէր ու վերջնահնչիւն: Կարստը իր *Կիլիկեան Հայերէնի Պարմական Քերականութիւն* աշխատութեան մէջ նշում է, որ «... մահացած սպորադասականի տեղ վաղ միջին հայերէնի շրջանում փորձել է իրեն հաստատել արտայայտութեան մի նոր բանաձեւ՝ կամ բայի միջինհայերէնեան սպորադասականը ու շաղկապի յարադրութեամբ: Կամ բայի սպորադասականի ձեւը կարծես ստեղծուած լինէր սպորադասական ժամանակների արտայայտութեան համար»¹²: Ապա բերում է բնագրային օրինակներ, ինչպէս՝ «խալապայն կենայ ու լինի (որպէսզի խոռվութիւն լինի)», «որ այնով առուտուր կենայ ու այնէ (որ նրանով առետուր անի)», «որ կենայ ու գանգտի (որ գանգատուի)», «եթէ կենայ ու գայ (եթէ գայ)», «թէ կենան ու կոռիւն (եթէ կոռուեն)» եւ.:

Ստորադասականի այդ ձեւը, սակայն, ըստ Կարստի, միջին հայերէնին բնորոշ միայն մի անցողիկ երեւոյթ էր: Աճառեանը ստորադասականի այս նոր յառաջացած ձեւերի չհաստատուելը լեզուի մէջ եւ միայն մի վաղանցուկ երեւոյթ լինելը բացատրում է հետեւեալ կերպ. «Երբ ստեղծուեց կայ ձեւը եւ սահմանականը որոշուելով՝ սպորադասականի հետ շփոթուելու առաջն առնուեց, այլեւս **կենայ ու** ձեւի կարիք չկար: Հինը, իր երկարութեան պարճառով զոհուեց կարճին, թէւ նոր էր: Զաւակը հօր տեղը գրաւեց»¹³:

Ահա այդ նախապէս առաջացած ստորադասականով կարելի է բացատրել Չէյթունի բարբառի սահմանական եղանակի ապառնիի **գու<(կու)** եղանակիչի առաջացումը՝ մասնիկներին բնորոշ անցումներով: Այստեղ պահպանուել են կենայի **կ** նախաձայնը եւ ու շաղկապը: Բառային երկու միաւորների առանձին մասերից առաջացած այդպիսի ձեւեր անսովոր չեն լեզուի մէջ: Այդպիսի ձեւեր են Զուլայի բարբառի օժանդակ բայի ձեւերը (ուզում **ամից**՝ մ+ամ. մամ, մաս, մա...), Սուեդիա-Քեսապ տարածքների **բըր** (պիտի որ>պիտոր>բըր), Չէյթունի բարբառի **նը՛լ** <(լինել. ն՛՝ ածանց, լ՛՝ վերջաւորութիւն): Այս շատ սահմանափակ հանդէս եկող եւ վաղանցիկ երեւոյթի պահպանուածութիւնը Չէյթունի հեռաւոր բարբառում կարելի է բացատրել այն բանով, որ եզրային

բարբառները յաճախ անելի հարազատ են մնացել նախահիմքերին, քան կենտրոններին անելի մերձատրները: Այս առնչությամբ Այստեանը գրում է. «... *ամենէն հեռաւոր գաղթեալները անելի մերձաւոր մնացին լեզուաւ, քան որոնք որ բնագաւառին աշխարհագրօրէն անելի մերձաւոր եւ քաղաքականօրէն սերտագոյն հաղորդակցութեան մէջ եղած են միշտ*»¹⁴:

Կիլիկեան տարածքներում **կայ** կամ **կայ ու** ձեւից առաջացած սահմանականի կու>գու/գօ եղանակիչն ու պայմանականի **կն** էապէս տարբերում են: Պայմանականի **կն** ունի համահայկական ընդգրկում, բացի միքանի տարածքներից (Ագուլիս, Մեղրի, Կարճեան են.) եւ միշտ հանդէս է գալիս նախադաս եւ առանց ծայնաւորման, մինչդեռ սահմանականի **կ(ը)/կուն** բարբառներում կարող է հանդէս գալ տարբեր ծայնաւորումներով (**կա**, **կու**, **կի**, **կը**, **կ>գա**, **գու**, **գի**, **գ**):

Յայտնի է, որ արեւելեան տարածքների բարբառային միաւորները սահմանական ներկայի ու անկատարի համար վաղուց իվեր մշակել են դերբայակազմ ձեւեր, որ տարբեր դրսեւորումներով առկայ է դեռ արեւելեան արդի բարբառներում: Ուստի այստեղ սահմանականի ու ստորադասականի տարբերակումը մեծ դժուարութիւններ չի առաջացրել: Վերաբերմունքային իմաստներ արտայայտող բայածեւերն արտայայտուել են վերաբերմունքային բառ-մասնիկներից առաջացած ձեւայիններով, որոնցից մէկն էլ, մեր կարծիքով, **կ(ը)/կն** է:

Կարսոյ իր յիշեալ աշխատութեան մէջ նշում է, որ «*Ապառնիի մեռած ձեւի տեղ դեռ չի զարգացել մի որոշակի ձեւ: Ապագան նշելու ֆունկցիան իր վրայ է վերցնում ներկան, մասամբ կու նախամասնիկով. օր. Կու տամ*, ես կու ասեմ ու կու ցուցնեմ ալանի ու յերեւան. մասամբ էլ ապառնին արտայայտում է կամիմ բայի օգնութեամբ. գնալ կամի, կամի ելնել, կամի ընծայիլ, կամի մեռնիլ, յերկարել կամի: Արտայայտութեան վերջին ձեւը նախընտրում է յապկապէս ոչ կիլիկեցի Մխիթար Հերացին (ընդգծումը մերն է - Գ.Հ.)*»¹⁵:

Մարգարեանը իր վերոյիշեալ յօդուածում **կամիմից** է թխեցնում եւ՛ սահմանական ներկայի, եւ՛ պայմանականի կերի ծագումը. մի բան որ համոզիչ չէ, քանի որ ինչպէս եղանակիչ բոլոր բառերը, **կամիմը** եւս գործառում է միայն անորոշի, կամ էլ արդէն դիմաւորուած անորոշի հետ, այնպէս, ինչպէս՝ ուզում եմ, կամենում եմ, գնալ (մ), կարելի է գնալ(մ) են.: .

Քանի որ արեւմտեան տարածքներում կալ բայի ձեւերն էին ընդհանրացել իբրեւ սահմանականի եղանակիչ (**կայից**՝ ներկայի **գօ>գու**, **կենայ ու** ձեւից՝ ապառնիի **գուն**՝ միայն Ջէթունի բարբառում), թերեւս հնարաւոր է ենթադրել **կենայ ու** անկատարից եւ **կամիմից** առաջացած **կու/կերի** բաղարկութիւմ՝ դրանց բառասկզբի կերի արտասանական ընդհանրութեան եւ մասամբ էլ՝ իմաստային մերձաւորութեան (կատարելի գործողութիւններ) հիման վրայ:

Այսպիսով, ենթադրում ենք, որ հայերէնի **կ(ը)** եղանակիչն ունի ծագումնաբանական տարբեր հիմքեր. **կայ, կայ ու** պակասատր բայից առաջացած **կ(ը) (կու/կո)**՝ սահմանականի կազմութիւններում, **կամիմ** եղանակատրող բառի կամ սկզբնավանկի սղում-մաշումով առաջացած **կ(ը)**՝ պայմանականի ձեւերում: Առաջինը սահմանափակուել է միայն արեւմտեան տարածքներում (**կ(ը)** ճիւղի բարբառներում): Երկրորդը՝ պայմանականի **կ(ը)ն**, ստացել է համահայկական գործառութիւն՝ բաղարկուելով թերեւս նախնական **կենայ ու** ստորադասականի ձեւից առաջացած **կու(>գու)**ի հետ՝ մոռացութեան մատնելով այս վերջին ձեւը:

Արեւմտեան տարածքներում **կ(ը)**ով ձեւերը արտայայտում են հաաստի, ստոյգ կատարուող գործողութիւն, համահայկական ծաւալում ստացած պայմանականի **կ(ը)ն**՝ գործողութեան ստոյգ, հաաստի կատարման ենթադրութիւն:

Արեւելահայ տարածքների որոշ բարբառներում **կ(ը)**ով ձեւերը, ունենալով հիմնականում ապառնիի արժէք, հեքիաթներում եւ պատմողական բնոյթի երկերում կարող են գործառել նաեւ ներկայի ձեւերում (այսպէս կոչուած պատմողական ներկայ): Հանդիպող այդպիսի իմաստները արեւելեան այն տարածքներում են գործառում, որոնց բնակիչները տարբեր ժամանակներում տարբեր շարժառիթներով հատուածաբար կամ առանձին համայնքներով տեղաշարժուել են այլ տարածքներ՝ բերելով նաեւ իրենց բարբառները: Պատմական ներկայի այդպիսի ձեւերը հանդէս են գալիս արեւելեան տարածքներ յայտնուած **կ(ը)** ճիւղի բարբառներում միայն:

Իբրեւ լրացուցիչ հիմնաւորում Այտնեանի կարծիքի, յաւելենք նաեւ Սուեդիա-Քեսապ տարածքների բարբառներում **կալ** պակասատր բայի մի գործառութիւն եւս: Այս բարբառներում **կալը կայ** ներկայի եւ **կայր** անցեալի ձեւերով գործառում է նաեւ իբրեւ էական բայ՝ է/էր իմաստներով, երբ ընդգծում է որեւէ իրողութեան ստոյգ լինելը, որեւէ առարկայի՝ տուեալ պահին որոշակիօրէն մի տեղ գտնուելը: Այսպէս, Չուջաուփս եմ՝ ուզգու (երեխան այս պահին, հիմա ու՛ր է, որտե՛ղ է գտնւում) հարցման պատասխանը կը լինի հուս գու (այստեղ է, այստեղ է հիմա գտնւում) կամ՝ հուս գիր մըրշեմ առանձ (մի քիչ առաջ այստեղ էր գտնւում, այստեղ էր), էմ ամմինձ գիր (հորեղբորենցս էր գտնւում, իմ հորեղբորենց էր). Սուեդիա: Այս նոյն իմաստներն էական բայով արտայայտելու դէպքում իրադրական լինելն արդէն արտայայտում է հուս (<հոս, այստեղ) ցուցականի հերթագայուած հէուս հիմքով՝ հէուսի (այստեղ է), հէուս ըր (այստեղ էր):

Սուեդիայի բարբառում գործառում է նաեւ ըսկու (ահա, հրէս) ցուցական վերաբերականը, որը հաստատման, հաաստիացման իմաստ է արտայայտում:

Այսպէս, ըսկու գօտւրտու (ահա, հրէս գնում է), ըսկու կըրէյծծի (ահա, հրէս գրեց զայն): Այս **ըսկուն** արեւելեան տարածքներում նոյն իմաստով գործառող **կոյ/կո/կյոի** բարբառային մի տարբերակն է: Այն կարող է հանդէս գալ սահմանականի ե՛լ ներկայի, ե՛լ անցեալի, ե՛լ ապառնիի ժամանակաձեւերի հետ, ինչպէս՝ ըսկու գէու կըրէյմ՝ծի (ահա գրում եմ զայն), ըսկու կըրիծօզի (ահա գրեցի զայն), ըսկու համու բըր կըրէյմ՝ծի. Հռէկ մ'իսիր, ըսկու համու գըկըրէյ՛զի (ահա, հրէս հիմա գրելու է, պիտի գրի. հոգ մի՛ արա, ահա, հրէս կգրի զա՛յն):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ամփոփելով այս ամէնը՝ կարող ենք եզրակացնել, որ հայերէնի **կ(ը)** մասնիկի ծագման մասին արտայայտուած կարծիքների մէջ մինչեւ այժմ էլ հիմնականում իշխող է Այտնեանինը: Նոր փաստերի հիման վրայ կարելի է որոշ յանելումներ կատարել, որ փորձեցինք մասամբ ներկայացնել, սակայն ըստ լեզուի ընձեռած փաստերի դրանք հերքելը, յամենայն դէպս, եթէ չասենք առայժմ անհնար, ապա փաստերի չափազանց խորը քննութիւն է պահանջում:

Ջահովեանի արտայայտած վերջին ենթադրութեամբ՝ իբրեւ **կոյի** ծագման աղբիւր դիտել հնդեւրոպական *g(h)ն, *g(h)օ մասնիկի *go տարբերակը, թերեւս կարելի է բացատրել բարբառային **կոյ/կո/կյո** վերաբերականի ծագումը: Այս *goն *g'ն տարբերակով պահպանուած է դերանուանական *eme-g'he, *tue- g'he ձեւերում երեւի հենց ինձ, հենց քեզ **իմաստներով**:

Այսուամենայնիւ, **կ(ը)ի** ծագման հարցում դեռ շատ մութ կէտեր կան, եւ ուումնասիրութիւններն այս ուղղութեամբ շարունակելի են:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ա. Այտընեան, *Քննական Քերականութիւն Աշխարհաբար Կամ Արդի Հայերէն Լեզուի*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1987, էջ 75:

² Նոյն, էջ 75:

³ Նոյն, էջ 76:

⁴ Նոյն, էջ 76:

⁵ Եոզէֆ Կարստ, *Կիլիկեան Հայերէնի Պալմական Քերականութիւն*, Երեւան, ԵՊՀ Հրատ. 2002, էջ 290:

⁶ Մանուկ Աբեղեան, *Հայոց Լեզուի Տեսութիւն*, Երեւան, «Միտք», 1965, էջ 316:

⁷ Հրաչեայ Աճառեան, *Լիակալար Քերականութիւն Հայոց Լեզուի*, Հտր. IV, Ա, Երեւան, Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1959, էջ 393:

⁸ *Հայոց Լեզուի Տեսութեան եւ Պալմութեան Հիմնահարցերը*, Հրատ.՝ Համազգայինի «Հայրենի Մտաւորականութեան Ֆոնդ», Պէյրուզ, Համազգայինի Վահէ Սէթեան Տպարան, 2000, էջ 304:

⁹ Նոյն, էջ 304:

- ¹⁰ Հրաչեայ Աճառեան, *Քննութիւն Առփայլի Բարբառի*, Երեւան, Հայկ. ՍՍՌ-Գիտութիւնների Ակադեմիա, 1953, էջ 171:
- ¹¹ Հայոց *Լեզուի Տեսութեան եւ Պարմութեան*, էջ 304:
- ¹² Կարստ, էջ 283:
- ¹³ Աճառեան, *Լիակապար*, էջ 396:
- ¹⁴ Այտնեան, *Նախաշափղ*, էջ 162:
- ¹⁵ Կարստ, էջ 287:

THE MODAL SUFFIX ԿԸ REVISITED (Summary)

KAGHTUHI HANANIAN
tatev_hanyan@mail.ru

Both Armenian and foreign linguists, including Fr. Arsen Aytinyan, Heinrich Peterman, Josef Karst, Manuk Abeghyan, Grigor Ghapantsyan, Aarart Gharibyan, A. Marvalyan, Alexander Margaryan, and Gevorg Jahukyan have examined the etymology of the Armenian modal suffix Կ(ը).

The paper critically analyses the various views expressed. It notes that the hypothesis which comes closest to approval is that suggested by Aytinyan regarding the origination of the functioning Կ(ը) /Կու suffixes as a modal suffix of the indicative only for the Western regions. Likewise, the author accepts (with some reservations, however,) Margaryan's hypothesis that "the indicative Կ(ը)/Կու functioning as a modal suffix in the Western regions, which has accepted an all-Armenian extension of Կ(ը) in the form of conditional inclination, has different etymological basics."